

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ**

**ԵԿԵՂԵՑՈՒ ԾՆՈՒՆԴԸ  
ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ**

**10 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԶԵՌՆԱՐԿ**

**ՄԱՍ I  
1-18 դասեր**

**ԵՐԵՎԱՆ  
ՏԻԳՐԱՆ ՄԵԺ  
2008**

**ՀՏԴ 373. 167.1:23/28(075)**

**ԳՄԴ 86.37 ց 72**

**Ե 351**

**Ե 351**

**ԵԿԵՂԵՑՈՒ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ:** 10 տարեկան  
երեխաների քրիստոնեական ուսուցման ձեռնարկ: Մաս I, 1-18  
դասեր / Մայր Աբոն Սուրբ Էջմիածին. - Եր.: Տիգրան Մեծ,  
2008թ.- 128 էջ:

**ԳՄԴ 86.37 ց72**

**ISBN 978 - 99941 - 0 - 281 - 5**

**© World Vision, 2008  
© Wordirect, 2008**



ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ԹԱՐԳՄԱՆԻՉ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝**

**ՏԵՐ ՊԱՐՈՒՅՐ ՔԱՂԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**ՀՈՎԱՆԱԿՈՐՈՒԹՅԱՄբ WORLD VISION  
ՄԻՋԱՋԳՎՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**



**ԵՎ WORDIRECT ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**ՆԿԱՐԻՉ՝ ԼԵՎՈՆ ԶԱՔՅԱՆ**

**ԴԱՄԱԿԱՐԳՎՅԻՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ՝ ՅՈՒԼՅԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ 1 Եկեղեցին Հիսուս Քրիստոսի ներկայությունն է . . . 7

1. Համբարձում . . . . .	9
2. Հոգեգալուստ . . . . .	15
3. Հավաքված Իմ Անունով . . . . .	21
4. Եկեղեցին հոչակում է Հիսուսի ավետիսը . . . . .	27

## ԳԼՈՒԽ 2 Կոչված Ենք վկայելու . . . . . 33

5. Առաքված Ենք ավետելու . . . . .	35
6. Ստեփանոս Նախասարկավագը . . . . .	41
7. Սր. Ստեփանոսը՝ առաջին նահատակը . . . . .	47
8. Առաջնորդել ծառայելով . . . . .	53

## ԳԼՈՒԽ 3 Կյանքը քրիստոնեական համայնքում . . . . . 59

9. Երիտասարդ Եկեղեցին աղոթում է միասին . . . . .	61
10. Երիտասարդ Եկեղեցու անդամները հոգ են տանում միմյանց . . . . .	67
11. Նրանք պաշտամունք էին անում միասին . . . . .	73
12. Տարբեր, բայց մեկ՝ Տիրոջով . . . . .	79

**ԳԼՈՒԽ 4****Վկայենք բոլորին** ..... 85

- |     |  |     |
|-----|--|-----|
| 13. | Սամարացիների և եթովպացի պաշտոնյայի դարձը | 87  |
| 14. | Պողոսի դարձը                             | 93  |
| 15. | Կոռնելիոսը՝ նորադարձ առաջին հեթանոսը     | 99  |
| 16. | Հեթանոսների մկրտությունը բացատրվում է    | 105 |

**ԳԼՈՒԽ 5****Եկեղեցին տոնում է** ..... 111

- |     |                               |     |
|-----|-------------------------------|-----|
| 17. | Հրեշտակները և հրեշտակապետները | 113 |
| 18. | Հիսուսկի պահը                 | 119 |

Աղոթքներ 10 տարեկանների համար ..... 125

# ԵԿԵՂԵՑԻՆ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է

ԳԼՈՒԽ 1



**Բ**իսուսը վերադարձավ Իր Տոր մոտ հարությունից

40 օր հետո: Նա Սուրբ Հոգին ուղարկեց Իր հետևորդներին միսիթարելու և Եկեղեցին առաջնորդելու համար: Ամեն անգամ, եթք Եկեղեցում հավաքվում ենք Սուրբ Պատարազի համար, Տիսուսը ևս այնպես ներկա է: Սուրբ Հոգին օգնում է Եկեղեցուն՝ աշխարհին քարոզելու Աստծո Արքայության մասին:



### Ծողների համար

Նարուցյալ Տեք Դիսուս Քրիստոսը երկրի վրա շրջեց 40 օր և հայդնվեց Իր հենքնորդներին բազում առիթներով: Նա երկինք համբարձվեց Իր առաքյալների և աշակերգների ներկայությամբ: Ինչպէս խոսքացել էր, Տեքն ուղարկեց Սուրբ Հոգուն, որպէսզի զորացնի և առաջնորդի Եկեղեցուն՝ Իր հենքնորդների խորհրդավոր մարմնին: Նավագարիմ Իր խոսքանը՝ Եկեղեցին հավաքվում է մասուցելու Սուրբ Պատարագ, որի միջոցով ապրում ենք Քրիստոսի ներկայությունը: Եկեղեցին, որպէս Քրիստոսի ներկայությունը երկրի վրա, շարունակում է Իր առաքելությունը՝ քարոզելով Աստծո Արքայության ավելիսը:

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**«Մինչ նրանք դեռ նայում էին, երկինք վերացավ, և  
ամպը նրան ծածկեց նրանց աչքերից»:**

*Ըստ Գործք. 1. 9*



### Ի Ա Յ Տ Ծ Ա Գ Ո Ր Ծ Ե Ծ Ք

Նաճախ ցանկանում ենք, որ ամեն բան արագ կափարփի: Ուզում ենք նոր բաներ սովորել, բայց չենք ցանկանում դրա համար շաբ ժամանակ հափկացնել: Մի օր մրածում էի, թե ինչպե՞ս եմ զրել սովորել: Նիշում էր՝ կար մեկը, որ ժամանակ էր գրամադրում ինձ սովորեցնելու համար: Լավ ուսուցիչը երբեք ժամանակ չի խնայում սովորեցնելու համար:

Երբ փոքր էի, զրիջով կամ մափիփով սովորաբար խզրգում էի թղթի վրա: Մի օր մայրս մի նոր զրիչ դրեց ինձ և բնքշորեն ծեռքս բռնելով այրութենի մի քանի դրա զրել սովորեցրեց: Դա կափարեց դանդաղ և ամենայն սիրով:

Վյոնուենք դպրոցում ուսուցիչները սովորեցրին մեզ, թե ինչպե՞ս պետք է զրել թուղթ դառները: Մի քանի դրաբի հետո ես կարողանում էի բառերով թղթին հանձնել իմ գաղափարներն ու մտքերը:

Մայրս նաև կարդում էր ինձ համար: Իսկ ավելի ոչ ուսուցիչները մեզ դպրոցում սովորեցնում էին կարդալ և խմանալ ավելին: Մենք ունեինք մի ամբողջ աշխարհ զրեր, պատմություններ ու բանասդեղծություններ, որոնք ընթերցում էինք մեծ հաճույքով: Ինքնուրույն կարդալու համար պարփական ենք մեր ուսուցիչներին, ովքեր ժամանակ հափկացրին մեզ սովորեցնելու համար: Նոյնիսկ դրանից հետո, երբ նրանք այլևս այնպեղ չեն մեզ սովորեցնելու համար, մենք կարողանում էինք օգտագործել այն ամենը, ինչ սովորել էինք նրանցից:

**Օգտագործի՛ր կարդալու և զրելու ունակությունները: Սպորին պողերի վրա զրի՛ր քո ամենասահրած զրի կամ պատմության անունը.**




---



---



---



---




---

Աստվածաշունչը կարդալիս գտիր այն անձին, ով նման է հիշյալ ուսուցիչներին, կամ նրան, ով զրել ու կարդալ է սովորեցրել քեզ:

## Նիսուսը գնում է Իր Տոր մոտ

Հայոց Դուկ. 24. 33-53, Գործը. 1. 1-11



ինձ և փեսնք, որովհենքն ոգին մարմին և սուկորներ չունի. ինչպես փեսնում եք, ես ունեմ»:

Եվ այս խոսքերն ասելով նա ցույց փուցեց իր ձեռքերն ու ովքերը:

Մինչ առաքյալները դեռևս ուրախությունից չեն հավատում և զարմացած են, ասաց նրանց. «Ուրեմն բան ունե՞ք»: Նրանք փոխն նրան խորոված ձկան մի կրոր, և նա վերցրեց ու կերավ նրանց առջև: Ապա Նիսուսն ասաց. «Սրանք այն խոսքերն են, որ խոսեցի ձեզ հետք, մինչ ձեզ հետք է, թէ՝ պետք է կարարվեն այն ամենը, որ գրված են իմ մասին Սուրբ Գրքում»:


Նա բացաբերեց Սուրբ Գրքի խոսքերը և ասաց նրանց. «Վյապես պետք է չարչարվեր Քրիստոսը, հարություն առներ մեռելներից և բռորդ օրը, քարոզվեր նրա անունով ապաշխարություն և մեղքերի թողություն բռոր ազգերի մեջ՝ Երուսաղեմից սկսած»: Եվ այս բաների վկաներն եր դուք: Եվ ահա ես ուղարկում եմ ձեզ իմ Տոր խոսքումը, իսկ դուք մնացեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ բիշ օրեր անց Սուրբ Հոգին կսրանաք: Զորությամբ

Երկու աշակերդները, որ հարությունից հետո դեմք էին Նիսուսին Էմմավուսի ճանապարհին, շար էին զարմացել: Նրանք վերադառնության Երուսաղեմ և գլուխ գասնմել առաքյալներին միասին և միապես: Նրանք ասացին նրանց. «Տերը հարություն է առել: Նա երևացել է Սիմոն Պետրոսին»:

Ապա այս երկուսը պատրմեցին, թե ինչ էր փեղի ունեցել ճանապարհին, և թե ինչպես էին ճանաչել Նիսուսին, երբ իրենց ուրեմն հաց էր կիսել ու փեղել:

Եվ մինչ նրանք դեռ խոսում էին այս ամենի մասին, ահա Նիսուսը եկավ և կանգնեց նրանց միջև և ասաց. «Խաղաղություն ձեզ»:

Նրանք ապշեցին ու վախեցան՝ կարծելով, թե ուրվական են փեսնում: Նա ասաց նրանց. «Ինչո՞ւ եր վախեցած և ինչո՞ւ ձեր սրբերում կասկածեներ ունեք. փեսներ իմ ձեռքերն ու ովքերը, որովհենքն նույն ինքն ես եմ. շոշափեցեք




կզգեսփավորվեք, երբ Սուրբ Հոգին իշնի ձեզ վրա: Այնամ դուք կլինեք իմ վկաները Երուսաղեմում, ամբողջ Հրեաապանում ու Սամարիայում և աշխարհի բոլոր ծագերում»:

Ապա Հիսուսը նրանց տարավ մինչև Բեթանիա և, բարձրացնելով իր ձեռքերը, օրինեց նրանց: Եվ մինչ նա օրինում էր նրանց, բաժանվեց նրանցից և դեպի երկինք էր վերանում: Իսկ նրանք երկրպագեցին Հիսուսին և մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ: Եվ միշտ տաճարում էին, զովարանում և օրինանում էին Ասքուն:

## Խորհեցք պատմության շուրջ

*Լրացրո՛ նախադասությունների միաբր քո ինքնուրույն բառերով.*


Երբ Հիսուսն առաքյալներին խոսդացավ, որ Սուրբ Հոգի պիտի սրանան, նրանք հասկացան, որ ...



Առաքյալներն ուրախացան, երբ վերադարձան Երուսաղեմ, որովհենքն ...

## Մտածի՛ր և արդահայրվի՛ր

1. Այս պատմության մեջ ո՞վ է նման այն ուսուցիչներին, որոնց մասին արդեն կարդացիր: Ինչո՞վ են նրանք նման իրաք:
2. Նկարագրի՛ր մի ժամանակ կամ դեպք, երբ զգացել ես Հիսուսի օգնության և ուղղության կարիքը քո կյանքում:



## Տուսանսրեցք

Մեր Տիրոջ Համբարձումը Եկեղեցու կարևոր բոլոներից է: Շիշապակում ենք այն հրաշալի իրադարձությունը, որ Հիսուսն իր առաքյալներին երեք տարի ուսուցանելուց հետո բարձրացավ երկինք, Իր Հոր մոտ: Ասում ենք, որ Նա համբարձավ դեպի Իր Տայրը:

Մինչև առաքյալների աջքի առջևից հեռանալը, Հիսուսը հիշեցրեց նրանց Տայր Աստծո խոսքն մասին: Նա խոսքացավ, որ առաքյալները Սուրբ Հոգու զորությունը պիտի սրանան: Ապա պիտի զնան շատ երկրներ և քարոզեն մարդկանց Իր հետ Արքայության մեջ սպասվող հավիքների մասին:

**Համբարձման սրբապատկերում փրնարին և գոտին հետեւյալները.**

1. Սրբանկարում ի՞նչ ծառի ճյուղեր կամ շիվեր են պարկերված:
2. Գոտին Տիրամայր Մարիամին, ով կանգնած աղոթում է սրբանկարի կենդրունում:
3. Նշմարին, որ Մարիամի շուրջ կանգնած են բոլոր առաքյալները, ովքեր վկայեցին Համբարձումը: Ո՞ր առաքյալն է բացակայում և ինչո՞ւ:

## Համբարձման Շարական

Ահա Համբարձման կանոնի ճաշու ԱԶ շարականի երրորդ փունք: Որոշ բառեր բացակայում են: Ճիշտ լրացրու բաց թողնված փողերը՝ ներքևում պրված համապատասխան բառերով:

«Երկնային \_\_\_\_\_ բաղդր ձայնով նոր \_\_\_\_\_ էին երգում ասելով. սա ինքն է՝ փառքի \_\_\_\_\_, աշխարհի \_\_\_\_\_, մարդկային ցեղի \_\_\_\_\_ : Իշխաններ, \_\_\_\_\_ բաշե՛ք ձեր դոները, որպեսզի \_\_\_\_\_ Թագավորը ներս մտնի»:

**Իրեշպակները Թագավորը երգ Փրկիքը վեր փառքի Ազադիքը**

## Սր. Շուշանիկը հավաքում է Տիսուսի խոսքումին

Շուշանիկը քաջ Վարդան Մամիկոնյանի դուստրն էր: Խսկական անունն էր Վարդենի կամ Վարդանուհի, սակայն փաղաքաբար նրան կոչում էին Շուշանիկ: Վարդենին ծնվել է 409թ., նրա գագիկին էր Սահականուշը՝ Սահակ Կաթողիկոսի դուստրը: Շուշանիկն ու նրա կրթութեր քոյլը շափ բարձր ու մաքուր ընդունելիան դաստիարակություն էին սպացել ծնողներից, երկուսն էլ բարեպաշտ ու եկեղեցասեր էին իրենց մանկությունից ի վեր: Շուշանիկն ամուսնանում է Վրաց իշխան Վազգենի հետ և ունենում երեք դուռ և մեկ աղջիկ: Նրանք խաղաղ ու երջանիկ ապրում էին Թիֆլիսում: Սակայն կարճ է վրևում նրանց երջանկությունը:

Վազգենը քրիստոնեական կրոնի բարոյական պահանջներից ազագվելու և պարսիկների աջքին հաճելի երևալու համար զնում է Պարսկաստանի մայրաքաղաք Տիգրոն և կամավորապես ուրանում քրիստոնեությունը՝ ընդունելով պարսից կրակապաշտ կրոնը: Նաև պարսից Պերող շահին խոսքանում է իր կնոջն ու զավակներին ևս մոգության կրոնին դարձնել: Լսելով ամուսնու ուրացման մասին՝ Շուշանը վերցնում է երեխաներին և ապաստանում եկեղեցում: Երկար համոզելուց հետո նրանց վերադարձնում են պալատ, սակայն Շուշանն այլևս չի ուզում որևէ կապ ունենալ իր ամուսնու հետ: Չհանդորթելով նրա պահվածքը՝ Վազգենը դաժանորեն ծեծում է նրան և ի վերջո բանք նեփում: Օրական մի կիոր զարեհացից ու ջրից բացի այլ բան չի փալիս կտոր: Որոշ ժամանակ հետո Վազգենը նրան բռնի բերել է գույխ արքունիք և հրամայում շղթաներով կապել ծեռքերը, ուրքերն ու վիզը: Դժբախտ Շուշանիկը բառապանքների մեջ ապրում է վեցը բարի: Քրիստոսի մեծ վկայութիւն անսասան է մնում իր հավաքի մեջ՝ հակառակ իր բարբարոս ամուսնու պենդումներին, որ ուրանա Քրիստոսին: Շուշանիկն իր մոտ ուներ մի փոքր Ավելարան, որ իր Սահականուշ դպրից էր նվեր սպացել: Բանդի դաժան պայմաններում նա իր մեծագոյն մխիթարությունը գրնում էր այս Ավելարանի ընթերցման մեջ: Շուշանը հավաքում էր Տիգրոց խոսքին. «Ես ձեզ հետ եմ, և ոչ ոք իշխանություն չունի ձեզ վրա»:

Բանվարկության 7-րդ դարին Շուշանիկը հիվանդանում է կրած սասպիկ գրանցանքներից: Ապա մարդիրսական մահվաճք կնքում է իր առաքինի կյանքը նույն բանքում 475թ.: Մահվան պահին նա աղոթում է Ասքծուն՝ ասելով. «Տե՛ր Տիսուս, ընդունի՛ր աղախնուդ հոգին»:

1. Ինչպես է Սր. Շուշանիկը նմանվում առաջալներին, ովքեր լսեցին Տիսուսի խոսքումը Նրա համբարձումից առաջ:




2. Կարո՞ղ ես որոշ օրինակներ դուրս բերել այս պատմությունից, որոնք կիմնավորեն Սր. Շուշանիկի մասին քո մրածումները: Գրի՞ն որանց մասին:

## Քարտեզով աշխարհանք

Մրանք այն վայրերն են, որտեղ Հիսուսը պատվիրեց իր առաքյաներին դառնալու իր վկաները:

Նշի՞ր Երուսաղեմը և Բեթանիան կարմիր գույնով, Սամարիան կանաչով, իսկ Տրեսալիան՝ կապոյթով:

**Սուրբ Երկրի քարտեզը  
Հիսուս Քրիստոսի ժամանակ**



## ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՏ

Այս շարաթվա դասի հայեցակենքը վերաբերում էր Հիսուս Քրիստոսի՝ հարությունից 40 օր հետո Համբարձմանը դեպի երկինք, իր Տոր մոր: Վհա մի քանի առաջարկություններ ընդունիքի հետ կարարելու համար՝ որպես ամրապնդում ստվորած դասի:

1. Դարդանակ ունեցեն Ասպլածաշունչը, մի մեծ մոմ նախրնպրեկի է հասպ, լուցիկ մոմը վառելու համար, ճերմակ թույթ, գրիչ, մկրատ և կազուն ժապավեն: Թող ձեր երկխան պարմի Համբարձման պարմության հիմնական կերպերը **Դուկ. 24.36-50** հարվածում: Ապա բացե՛ր **Մատթեոսի Ավելարանի 28.20** համարում նշված պարզամք, որը Հիսուս Քրիստոսը բավե առաքյալներին և իր հետորդներին երկինք համբարձվելուց առաջ. «Եվ ահա ես ձեզ հետ և մ թոյր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը»: Մատթեո՛ք, թե ինչ է դա նշանակում: Հիսուսի վերջին պարզամք մեզ գործեալում է, որ կյանքում հանդիպող ցանկացած անախորժություն ու դժվարություն չի կարող ընկճնել ու փապալել մեզ, քանի որ Տերը մեզ հետ է:

2. Կրիքը երկար թղթիկ և վրան գրե՛ք. «Եվ ահա ես ձեզ հետ և մ թոյր օրերում՝ մինչև աշխարհի վախճանը»: Հսկ ցանկության նկարագարենք թղթիկը: Փակցրե՛ք այն մոմի վրա, և դրե՛ք այնպիսի փեղ, որդեռ ընդանիքով կկարողանաք միասին աղոթել: Եթե մոմը բավական մեծ է ու հասպ, կարող եք պատրաստել մեկից ավելի թղթիկներ: Երբ ընդունիքով կանգնեք աղոթքի, վառե՛ք մոմը, ինչոր կիշիեցնի ձեզ Հիսուս Քրիստոսի բաված պատրումը: Զգնյաց եղեք, որ հանկարծ մոմի վրայի թուղթը չվատվի:

3. Ընդունիքով երգե՛ք կամ արդասանե՛ք Համբարձման կանոնի Օրինության ԴԶ շարականի առաջին երկու գոտունը.

«Մեր Տերը եղիղնը համբարձեց աշակելուրներին ասելով՝ Երուսաղեմ  
բաղարում մնացեք, մինչև որ երկնքից գորություն սպանաք»:

«Սուրբ առաքյալները միարան, միասիրով և միակրոն նստած սուրբ  
վերնապանը Սուրբ Տողու զալուսպին էին սպասուի»:

«ԵՎ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով,  
ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս»:

Ըստ Գործք. 2. 4

## Ի Ա Յ Տ Ը Ա Գ Ո Ր Ծ Ե Ը

Գիդե՞ն արդյոք, որ շաք մարդիկ կարծում են, թե  
ճառ ասելն իրոք սարսափելի բան է:


Դա պարագանեց ինձ հետ մի փարի առաջ: Ես  
այնքան էի նյարդայնացել բազմաթիվ մարդկանց  
առջև ճառ ասելու մտքից, որ սկսեցի քրփնել:

Կրթուեր եղբայր՝ Դանիելը, ավելի վագ վիճակում  
է: Նա մի հիվանդություն ունի, որի պարբռով  
ցնցում է և երբեմն գերին ընկնում: Նա երբեք չի  
զգում, թե երբ այն կապահի՝ դպրոցում, դպրոցում,  
այզում խաղախիս: Եթե նրա հետ եմ, օգնում եմ նրան:  
Բայց միշտ նրա կողքին չեմ: Եվ դեռ չենք զգել նրան  
բուժելու որևէ դեղամիջոց: Դանիելի համար  
ամենավագր բանն այն է, որ մարդիկ երբեմն ծիծաղում  
են նրա վրա, երբ գլւսնում են նրան ցնցվելիս և վայր  
ընկնելիս:

Ես փակավին 11 փարեկան եմ և բավարար գումար  
չունեմ նրան բժիշկական հետքազորության դրանելու:  
Բայց ես սիրում եմ իմ եղբայր և կցանկանայի որևէ բան  
անել նրա համար:

Որոշեցի մի խոսք շարադրել և այն մարդկանց ներկայացնել: Նրանում ես պարմում եմ Դանիելի  
հիվանդության մասին և հիշեցնում մարդկանց, որ Ասքված ուզում է, որ օգնենք իրար և աջակցենք մեկս մյուսին:  
Գուցե հարցնես, թե արդյո՞ք դեռ նյարդայնանում եմ և քրփնում: Այո՛, բայց ոչ այնքան, որքան առաջ: Կարծում  
եմ, որ կարող ես մի բան անել, նույնիսկ այնպիսի բան, որ երբեւ մտքով չի անցել, եթե դա կարևոր է քո սիրելիի  
համար:

Գրի՞ն մի բանի մասին, որը հիմա կարող ես անել, ինչը չէիր կարող անել անցյալ տարի: Ի՞նչ  
պետք է սովորենիր, որպեսզի կարողանայիր անել այդ նոր բանը:




---



---



---

Աստվածաշնչի պատմության մեջ ուշադրություն դարձրու, թե առաքյալներն ինչպե՞ս կարող  
դարձան անհնարին անել Սուրբ Յոգու զորությամբ:

## Սուրբ Տոգին պրվում է

Հայր Դուկ. 24. 49, Տնվի. 14. 25-26, Գործը. 2. 2-41



բի մասին: Ի՞նչ կարող է լինել սա»:

Սակայն մարդկանցից շափերը ծաղրում էին առաջալներին՝ ասելով. «Այս մարդիկ նոր զինուց հարրած են»:

Ապա Պետրոսը բարձրացրեց իր ձայնը և խոսքն ուղղեց հավաքված ամրոխին. «Ո՞վ հրեասկանցիներ և դուք ամենք, որ Երուսաղեմում եք բնակվում: Մենք հարրած չենք, ինչպես շագերդ կարծում եք, քանի որ դեռ առավողյան ժամը 9-ն է. այլ՝ այս այն է, որ ասվեց Հովել մարզարեի թերանով Տիրոջ մեծ ու փառավոր զալավորյան օրվա մասին: Վյո օրը ամեն ոք, որ Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի»:

«Ով իսրայելացիներ, լսեցնք այս խոսքերը: Ասրված հրաշքներ, նշաններ ու զարմանալի գործեր արեց ձեր մեջ Դիտու Նազովինցու միջոցով: Ասրծո սահմանած խորհրդով և զիբուրյամբ այս Դիտուին անօրենների ձեռքը մարնելով խաչակայսի վրա գամեցիք և սպանեցիք: Սակայն մահը չկարողացավ իշխեր նրան: Դավիթ թագավորը՝ Դիտուին նախնին, ասում է Նրա մասին. «Դո, Տայր Ասրված, իմ հոգին չես լրելու: Դո ինձ ցոյց տվեցիր կյանքի ճանապարհները»:

«Այս Դիտուն է, որ Ասդված հարություն փվեց, որին մննք ամենքս վկա ենք: Արդ, Խրայելի ամբողջ գունը վսպահորեն թող իմանա, որ Ասդված նրան և՛ Տեր, և՛ Օծյալ արեց, այն Դիտուին, որին դուք խաչեցիք»:

Պենքնեղոսթեի օրը առաքյալ-  
ները հավաքվել էին: Հանկարծ մի  
ձայն եկալ երկնքից սուրող քամու  
նման և լցվեց ամբողջ գունը,  
որպես նրանք նստած էին: Ճըն  
լեզուներ երևացին, և բոցն իշավ  
նրանցից յուրաքանչյուրի վրա:  
Նրանք լցվեցին Սուրբ Հոգով և  
սկսեցին խոսել ուրիշ լեզուներով,  
ինչպես որ Սուրբ Հոգին էր նրանց  
այդպես խոսել վայիս:

Հավաքացյալ հրեաներ և  
փարբեր ազգության մարդիկ եկել  
էին Երուսաղեմ Պենքիսկոսպեհ  
մեծ քոնին մասնակցելու համար։  
Նրանք շատ լին զարմանում՝  
լսելով առարյալների խոսքերը և  
միմյանց ասում. «Չէ՝ որ սրանք  
բոլորը, որ խոսում են, զալիիացի-  
ներ են, բայց ինչպես է, որ մենք  
նրանց լսում ենք մեր յուրաքանչ-  
յուր բարբառով։ Ինչպես է, որ  
ամենքս լսում և հասկանում ենք,  
որ նրանք խոսում են մեր լեզունե-  
րով Ասքծո մեծագործություննե-

Երբ մարդիկ լսեցին այս զորավոր խոսքերը, հարցրին Պետրոսին, թե ի՞նչ պիտի անեն: Պետրոսը նրանց ասաց, որ պիտի ապաշխարեն և մկրտվեն: Նա ասաց նաև. «Ասրծո խոսքումը ձեզ համար է, ձեր որդիների և բոլոր հեռավորների համար, որոնց կկանչի մեր Տիր Աստված»:

Այդ օրը մոտ երեք հազար հոգով ավելացավ Եկեղեցին:



**Օղջա մարգարենուիի**

**Եղիա մարգարեն**

**Երեմիա մարգարեն**

**Աննա մարգարենուիի**

**Հովնան մարգարեն**

**Եսայի մարգարեն**

**Սր. Եղիա  
մարգարեն**



## Խորհենք պատմության շուրջ

1. Քեզ ինչպես կզգայիր, եթե Հոգեգալսպյան օրը լինեիր ամբոխի մեջ և լսեիր առաքյալներին դարձներ լեզուներ խոսելիս: Ի՞նչ կասեիր քեզ մոտ կանգնած մարդկանց:

---



---



---

2. Ի՞նչ ես կարծում, Հոգեգալուսպն ինչո՞ւ է երբեմն կոչվում Եկեղեցու «ծննդյան օր»:

---



---



---



## Ի Պ Գ Ե Գ Ա Լ Ս Տ Յ Ա Ծ Տ ո ւ շ

Տրեական Պենտէկոստին թերքի դուռն էր: Վյու մասին նշվում է Հին Կրակարանում: Եվ հենց այդ օրը Երուսաղեմում Պեփրոսն այնպիսի բաջությամբ խոսեց ժողովրդի առաջ, որ այն դարձավ մի գլուխակ նոր վրոն: Վյժմ այն դարձավ Ասքծուն շնորհակալություն հայրնեկու օր ոչ միայն թերքի, այլև Սուրբ Հոգու Իր պարզեկ համար: Սուրբ Հոգու առաջնորդությամբ ժողովուրդը կկարողանար ուրիշներին պարմել Ասքծոն սիրո և Նրա Արքայության մասին:

Չափ Հոգեկալուսի սրբանկարը: Այն չի պարմում, թե ի՞նչ գլուխի ունեցավ այդ օրը: Փոխարեւնը՝ այն ցույց է գտալիս, թե ի՞նչ պարահեց Հոգեկալուսի շնորհիվ:

Ուշադրությամբ նայիր սրբապարկերին, ապա կարդա՛ ներքեսի կապակցությունները: Շեփեկի՛ր ուսուցչի ցուցումներին՝ գրնելու համար «քո զործակցին» և համեմարկի՛ր նկարագրություններն ըստ իրենց իմաստի:

### Սրբանկարում պարկերված կերպարների նկարագրությունը.

1. 12 գլամարդիկ նստած են:
2. Նրանցից 4-ը ձեռքերին ունեն զրբեր կամ թղթե փառույթներ:
3. 12 նստածների կենդրոնում կամ մի թափուր գլուխ:
4. Մեկը, որ նման է արքայի, նստած է մի խավար գլեղում, սրբանկարի ներքեսի մասում:
5. Վերևից լույսի ճառագայթներ են ընկնում սրբապարկերի մեջ:

### Սրբանկարում պարկերված կերպարների իմաստը.

- ա. Վյու գլամարդիկ առաքյալներն են, ովքեր գրել են Ավետարաններ՝ Մաքրենոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես:
- բ. Կենդրոնի թափուր գլուխ պահված է Հիսուս Քրիստոսի համար: Նա է Եկեղեցու գլուխը, չնայած Նրան այլև չենք գլուխում երկրի վրա:
- շ. Սուրբ Հոգին երկնքից լույս և իմաստություն է պարզենում աշխարհին:
- դ. 12 առաքյալները խաղաղ նստած են միասին:
- ե. «Արքան» խավարում նստած ձգվում է գլուխ ամրող աշխարհին: Սուրբ Հոգու զորությամբ առաքյալները քարոզեցին և լուսավորեցին աշխարհը:

## Վարժություն

Պենդեկոսպիկի օրը Սուրբ Հռովմայի հիշատակ ուժեղ, սրբնաց քամու նման: Քամու ուժն օգտագործում ենք շարժելու մեջ բաներ, օրինակ՝ հոգմատացները, և փոքր բաներ, ինչպես օրինակ՝ այս նկարում պարկերված ասպետականիվը:


Բայց Սուրբ Հոգին իշխում է մեզ վրա նաև այլ եղանակներով: Մկրտչելիս մենք սպանում ենք Սուրբ Հոգի՝ սրբալոյս մյուտոնի միջոցով: Քահանան օծում է մեզ մյուտոնով և աղոթում, որ Աստված առաջնորդի մեզ կյանքում, և մենք դատանաբ Երկնի Վրայության ժամանգները:

Պատկերին մի բան, որ Սուրբ Տողին անում է այս ասպահանիվի ձևով:

## Սովորենք ավելին

*Հուծի՞ր այս խաչքառը: Ահա հարցենք.*

- 1) Այս անունով առաջյալը հրաշալի քարող խոսեց ժողովրդին այդ մեծ գովնի օրը:
  - 2) Այդ օրը քանի՞ հազար հոգի մկրտվեցին:
  - 5) Գործք. 2. 10 համարում նշված 3-րդ երկիրը:
  - 6) Գործք. 2. 9 համարում նշված 1-ին երկիրի անունը:
  - 7) Գործք. 2. 10 համարում նշված մեկ այլ փեղանուն:
  - 11) Այդ օրը առաջյալները խոսեցին դարրեկ բարբառներով կամ ... :



## Նորիգոննական

- 3) Հյուս Քրիստոսի հարության և այդ գոնի միջև ընկած օրերի քանակը /փե՞ս «Կյանքը Եկեղեցում» ենթաքամինք/:
  - 4) Տոնի անոնը, որի առիթով առաջալը ճառ խոսեց:
  - 8) Առաքյալները նախ զգացին Սուրբ Հոգին՝ իրքն սաստիկ մի ... :
  - 9) Քաղաքը, որպես գլուխ ունեցավ այս մեծ գոռնը և հրաշքը:
  - 10) Դա մի հին գոռն էր, որը նշվում էր ժողովրդի կողմից:

## ՏՎԱԾ՝ ԸՆՏՎԱՆԻՔԻ ՇԵՏ

Այս անգամվա համար պետք կունենաք Ասդրամաշունչ, մկրաք, շագանակագույն և ճերմակ թղթեր, կայուն ժապավեն կամ սոսինձ, և զրիչ կամ մարդիքներ: Միասին երգնք կամ արդասանե՞ք Շոգեգալսպյան շարականի հեգեսյալ փունք.

*«Երկնային հրեշտակների և երկրավոր մարդկանց Վարդապետ,  
Դու որ հովհաններից մարզարեներ և ձկնորսներից առաքյալներ  
եւ պատրաստում, մաքսավորներին ավելացրանից  
և հալածողներին խոսքից քարոզիչ եւ դարձնում,  
Քո իմաստության բաժակից մեզ էլ ողորմությամբ խմեցրու»:*

Զկնորսները շարականներում հաճախ կոչվում են «իմաստուն», սակայն զիբենք, որ նրանք հասարակ ու անուսում մարդիկ են: **Մարկոսի Ավելաքարանի 1.16-19** համարներում փոքր-ինչ նկարագրվում է նրանց վարած կյանքը, որ զբաղվում են ուժկանները ծովը զցելով, այնուհետև դրանք կարկափելով: Վյուհանդերձ, երբ Շխուս Քրիստոսը կանչեց նրանց, նրանք իմաստուն գրնվեցին հետքելու Նրան: Սուրբ Շոգու զորությամբ նրանք այնպիսի գործեր կատարեցին, որ հավանաբար երբեք նրանց մտքով չեր անցել, կամ Էլ՝ կպափկերացնեին, թե կկարողանային անել. այն Է՝ խոսքով համոզել և հավաքի բերել որիշներին:

Նրանց նման մենք կարող ենք զորանալ Սուրբ Շոգուց, եթե իմաստուն գրնվենք ճանաչելու Շխուս Քրիստոսին՝ որպես մեր Փրկչի, և հետևել Նրա պատգամներին մեր կյանքում:


Ընդունելով ընթերցենք **Մարկոս 1.16-19** հավածը: Չորսեր հետքեյալ հարցերի շուրջ.

1. Ինչո՞ւ են ձկնորսները կոչվում «իմաստուն»:
2. Շխուս ինչպե՞ս «որսաց աշխարհին Իր ուժկանում» այս ձկնորսների միջոցով:

### Ընտանեկան վարժություն

- ❖ Միասին մի «ուժկան» պատրաստե՞ք օգտագործելով շագանակագույն թուղթը, այն շերտերի կտրապելով և ցանցափիք իրար փակցնելով: Սա կապակցվում է այս դասի Շայփնագործենք բաժնի պարմության հետ:
- ❖ Ազա ձկնածն կրթե՞ք ճերմակ թուղթը: Մարդկանց որոշ եղանակների մասին, որ ենթադրենք ձեր ընդանիքի անդամներից մենք դառնում են «մարդկանց որտորդ»՝ ուրիշներին քարոզելով Շխուս Քրիստոսի մասին: Ինչպե՞ս պետք է ինքներս մեզ դրսնորենք, որպեսզի մարդիկ ցանկանան ավելին իմանալ Աստծո մասին:
- ❖ Գրե՛ք ձեր մտքածած եղանակները ձկնածն թղթերի վրա, դրանք փակցը ուժկանին և այն ցուցադրե՞ք ձեր դանք՝ իրեն հիշեցում:

*Կողին անգամ երգե՛ք կամ արդասանե՞ք շարականու միասին:*



«Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով,  
այնտեղ եմ ես, նրանց մեջ»:

Ըստ Մատթ. 18. 20



## ՀԱՅՏԱԿԱՊՈՐԾԵԾՔ

### Աշխափենք միասին՝ որպես ընկերներ

Երբեմ լսե՞լ ես այս իին ասացվածքը. «Մի ձեռքք ձեռք է լվանում, երկու ձեռքք՝ երես»: Սա նշանակում է, որ ցանկացած մեծ գործ ավելի հեշտ ու արագ կարող ես անել, եթիւ շար են օգնական ձեռքերը: Դրանից ոչ մի ձեռքք շար չի հոգնում, քանի որ աշխափանքի ծանրությունը կիսվում է հավասարապես:



Միայն գործն ու աշխափանքը չեն, որ ավելի լավ են սրացվում շափերի մասնակցությամբ: Եթիւ լավ լուր ենք լսում, ուզում ենք այն կիսել մյուսների հետ: Եթիւ խնդիրներ են ծագում մեր կյանքում, մենք մեր հոգսի մասին պատմում ենք ուրիշներին: Նրանք կարող են կիսել մեր անհանգստությունը և տիխորությունը: Նրանք կարող են օգնել մեզ՝ խնդիրների լուծման եղանակներ մրածելով:

Ահա երեք իրավիճակներ, որոնցում անձը ուրախ կլիներ սրանալու ուրիշների օգնությունը: Ձեր խմբով կարդացե՛ք ուսուցչի գրված գործերակը: Ազա միասին աշխափե՛ք՝ զբնելու մի եղանակ, որով ընկերները կկարողանային օգնել: Կարող եք արդահայտել ձեր մրածումները զրավոր, ներկայացնելով իրքն դերախաղ, կամ նկարներ գծելու միջոցով:

**1** Նովիկը պետք է մրածակի բնագիրության դասի մի քանի բարդ բառեր: Բայց դրանք հեշտ բառեր չեն, և նա ժամերով ջանում է անզիր անել այդ դժվարին բառերը: Ընկերներն ինչպե՞ս կկարողանային օգնել նրան:

**2** Աննայի մայրը ճամփորդությունից բուն է վերադառնալու վաղը: Աննան իր եղբոր՝ Շայլի հետ ուզում է բնակարանը մաքրել, սրբել ու կարգի բերել մինչև մայրիկի վերադարձը: Նրանք նաև ուզում են մի թերեւ ճաշ եփել ու սեղան պատրաստել: Բայց հիվանդ լինելու պատճառով երկուսն էլ ի վիճակի չեղան անելու այն ամենը, ինչ ծրագրել էին: Ընկերներն ինչպե՞ս կկարողանային օգնել նրանց:

**3** Դավիթն ուզում էր ավելի շար բան իմանալ համակարգիչների մասին: Նա հուսով է, որ մի օր այդ գծով աշխափանք կունենա դպրոցն ավարտելուց հետո: Բայց Դավիթի ընդունում ոչ ոք համակարգիչ չունի և չկա մեկը, որ դրանցից բան հասկանա: Նրանք ափսոսում են, որ որևէ կերպ չեն կարողանում օգնել Դավիթին: Ընկերներն ինչպե՞ս կկարողանային օգնել նրան:

Աստվածաշնչի պատմությունն ընթերցելիս տեսե՛ք, թե ինչպե՞ս նախնական եկեղեցու անդամներն ընկերների նման օգնում էին իրար:

## Տիսուր և Իր ընկերները՝ առաքյալները

Հայր Մատթ. 18.19-20, Ղոկ. 24.33-43, Գործ. 1.12-14 և 2.42



Էմմավուսի ճանապարհին



«Ուր երկու կամ երեք հոգի հավաքվեն իմ անոնով, ես այնտեղ եմ»:

Տիսուր Քրիստոսը շաբ հանձնարարություններ փվեց Իր առաքյալներին, թե ինչպես պետք է աշխագին միասին և առաջնորդեն Եկեղեցին՝ Երկնային Իր Շոր մոտ համբարձվելուց հետո: Նա նաև մի հիանալի խոսքում փվեց նրանց՝ ասելով. «Եթե ձեզնից երկուսը միաբանվեն երկրի վրա որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կկապրարվի նրանց համար իմ Շոր կողմից, որ երկնքում է. որովհետք ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անոնով, այնտեղ եմ ես, նրանց մեջ»:

Տիսուր ցոյց փվեց Իր առաքյալներին, որ կլինի նրանց հետ մեռելներից հարություն առնելուց հետո: Ինչպես ծանրացաք Դաս 1-ում, Նա մովեցավ նրանցից երկուսին ճանապարհվելիս: Ապա այցի եկավ բոլորին, երբ նրանք միասին հավաքված էին: Նա ճաշեց նրանց հետ և ցոյց փվեց Իր ձեռքերի ու ովքերի վերքերը: Նա ուզում էր, որ նրանք միասին լինեն, միասին աշխագին ու աղոթեն և օգնեն իրար: Նա ցանկանում էր նրանց հավասպիցներ, որ Ինքը նրանց հետ է ամեն բանում:

Այսպիսով, Տիսուրի համբարձումից հետո, երբ այլս նրանց կողքին չափի լիներ, առաքյալները մնացին Երուսաղեմում և ապրում էին միասին: Նրանք մշքապես աղոթում էին և վերնաբանը ժամանակ անցկացնում իրար հետք՝ վերիշելով այն իրաշալի գործերը, որ Տիսուր կապրարեց և իրենց ուսուցանեց:

Շողեգալսպյան օրից հետք շաբերը հետքեցին առաքյալներին և դարձան նախնական Եկեղեցու անդամներ: Նրանք իրենց ժամանակն ու եռանդը գրանադրում էին աղոթքին: Առաքյալներն ուսուցանում էին նրանց, և բոլորը դարձան իրար ընկերներ: Միասին ուզում էին, միասին սովորում և միասին պաշտում Ասդուն: Նրանց միավորել էր սերը, որ ունեին Տիսուր Քրիստոսի՝ իրենց Տիրոջ նկարմամբ:

## Մտածենք պատմության շուրջ

1. Վերաբաղի համար նշված դեպքերը ճիշփ հաջորդականությամբ դասակարգիր՝ դառները ներքևի աղյուսակներում ձախից աջ գրելով:

- a. Հիսուսը համբարձեց երկինք, Իր Հոր մոտ:
- b. Հիսուսը մոփեցավ Իր առաքյալներից երկուսին ճանապարհով քայլելիս:
- c. Առաքյալներն ապրում էին Երուսաղեմում՝ միասին աղոթելով ու աշխափելով:
- d. Հիսուսը հարություն առավ մեռելներից:
- e. Եվլողներն կազմվեց, երբ մարդիկ հերքսեցին առաքյալ ների օրինակին՝ նրանց հետ աղոթելով ու նրանցից ստվորելով:
- f. Հիսուսը երևաց Իր առաքյաներին, երբ նրանք բոլորով միասին էին, և ճաշեց նրանց հետ:



2. Ի՞նչ ես կարծում, ի՞նչն սդիպեց մարդկանց Հոգեզալուսպից հետո հերքսելու առաքյալների օրինակին: Առաքյալների ապրելակերպի մեջ մարդիկ ի՞նչ նկատեցին, որ իրենք ես ցանկացան նույն կերպ ապրել: Նշի՛ր երկու բան, որ առաքյալները արեցին, ինչը մարդիկ դեսան և հավանեցին:

---

---

---

Ես զգացի, որ Հիսուսն ինձ հետ է.

---

---

---

## Մոտիւ սացոթացոք

### Սուրբ Պատարագից

Սուրբ Պատարագը մեր Եկեղեցու հոգևոր հիմնական արարողությունն է: Մենք միասին հավաքվում ենք ասպածածպաշտության տվյալարար Սուրբ Պատարագի ընթացքում, չնայած կան Եկեղեցական այլ արարողություններ: Սուրբ Պատարագը կարարվում է կիրակի առավույյան: Մկրտությունից հետո սա այն միակ խորհրդան է, որի ընթացքում մենք Սուրբ Հաղորդություն ենք սպանում՝ որպես Ասպծո յուրահապուկ պարզեն:

Առաջապների ժամանակվա մարդկանց նման մենք հավաքվում ենք միասին աղոթքի և շնորհակապություն հայփնում Ասպծուն: Քահանան միայնակ չի մարդուցում Սուրբ Պատարագը՝ առանց մյուս սպասավորների և Եկեղեցու հավաքացյալների:

Ուշե՞մ են նրանք, որ ծառայություն են մարդուցում Սուրբ Պատարագին:



**Քահանան** ծառայում է խորանին: Նա.

- ❖ մարդուցում է մեր աղոթքը Ասպծուն,
- ❖ Ասպծո օրինությունն է բաշխում մեզ,
- ❖ բարող է խոսում,
- ❖ Սուրբ Հաղորդություն է բարել:



**Սարկավագը** սպասարկում է քահանային խորանի վրա: Նա.

- ❖ օգնում է քահանային.
- ❖ խնկարկում է բուրվատով,
- ❖ կարդում է տորթքրային ընթերցումները,
- ❖ կարդում է Ավելարանը,
- ❖ ասում է իր բաժնի աղոթքները,
- ❖ ուղղություն է ցոյց փալիս մարդկանց՝ հորդորելով. ուրքի կանգնել, պարասիստնել և ուշադիր հետեւ:



**Երգախումբը** (երբեմն դպիրներ).

- ❖ երգում է մեղեղիներն ու գուղերը,
- ❖ երգեցողությամբ պարասիստնում է քահանայի աղոթքներին և սարկավագի քարոզներին:



**Հավաքացյալներ** Եկեղեցում հավաքված մարդիկ են, ովքեր.

- ❖ երգում են երգախմբի հետ,
- ❖ երգում կամ ասում են «Ամեն» և «Տի՛ր, ողորմեա»,
- ❖ պարասիստնում են քահանայի կամ սարկավագի աղոթքներին,
- ❖ աղոթում են միասին,
- ❖ քահանայից սպանում են Սուրբ Հաղորդություն:

Բոլոր այս մարդիկ մասնակցում են Սուրբ Պատարագին: Մենք կոչված ենք համախմբվելու, միասին աղոթելու և միասին սպանալու Սուրբ Հաղորդություն Ասպծո ներկայությամբ: Մենք հրավիրվում ենք որպես Իր դրան՝ Եկեղեցու հյուր:

«Ամեն» բառը, որ երգչախումբը հաճախ երգում է ի պատասխան աղոթքների, նշանակում է «Վյո՛» կամ «Թող լինի»: Երգչախումբը նաև երգում է «Տէ՛ր, ողորմեա» քահանայի և սարկավագի աղոթքներից հետո: «Տէ՛ր, ողորմեա» երգելը նշանակում է, որ երգչախումբը միանում է քահանային և սարկավագին՝ խնդրելու Ասպծո օրհնությունը և պահպանությունը:

Ահա որոշ զորձողություններ, որոնք կարարվում են քահանայի, սարկավագի, երգչախմբի, հավագրայցյալների կողմից: Գրի՞ր յուրաքանչյուր զորձողության գրառ զծապագկերի ճիշփ մասում: Եթե այն կարարվում է մեկից ավելի անձանց կողմից, ապա գրի՞ր այն յուրաքանչյուրի հարվածում:

*ա) Տալ Սուրբ Հաղորդություն*

*բ) Պատասխանել քահանայի և սարկավագի աղոթքներին*

*գ) Երգել*


*դ) Ծնորհակալություն հայտնել Աստծուն*

*ե) Ստանալ Սուրբ Հաղորդություն*

*գ) Կարդալ սուրբգրային ընթերցումներ*

*է) Կարդալ Ավետարան*

*ը) Օգնել քահանային խորանին*



## Դիտուսի աղոթքը մեզ համար

Եթե մեր Տերը կոչեց մեզ աշխագելու միասին և օգնելու իրար, չասաց, թե դա միշտ հեշտ է լինելու: Նա ջայռագույն աղոթքը է, որ մենք միշտ համաձայն կլինենք: Բայց Նա շաբաթ հարակ նշեց, որ կամենում է, որ մենք միասին գործենք՝ ինչպես առաջապները: Նաև ցանկանում է, որ միասին հավաքվենք և աղոթենք որպես Եկեղեցու ընդունությունը: Ահա այսպես առաջապները սկսեցին վարվել Հոգեգալասպյան օրը, երբ շաբերը միացան նախնական Եկեղեցուն, որը այսօրվա մեր նույն Եկեղեցին է:

Միշտ չէ, որ Եկեղեցու անդամները համաձայնվում են լավագույն կերպով կապարել իրենց պարբականությունները: Անհամաձայն գրինվելու դեպքում մեր Տերը կամենում է, որ նրանք համախմբվեն և աղոթեն: Վյու կերպով նրանք կփորձեն հասկանալ, թե Տերը ինչ է պահանջում իրենցից:

Ահա թե ինչ ասաց Դիտուս Քրիստոսը, երբ աղոթեց Իր Տորը առաջապների համար: Շպիլի՛ ներքսի խառնազրված բառները և գրի՛ դրանք իրենց ճիշտ գրեղերում:

«Ես \_\_\_\_\_ եմ, որդեսզի ամենիր \_\_\_\_\_ լինեն, ինչդես դու, \_\_\_\_\_,  
իմ մեջ, և ես` \_\_\_\_\_ մեջ, որդեսզի \_\_\_\_\_ էլ մեր մեջ \_\_\_\_\_»:

**այրՃա նենի ոք չումաղա իմ արնքն**

## ՏԱՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՏ

Այսօրվա դասի հայեցակենքը հենքեյալն է: Դիտուս Քրիստոսը խոսդացավ Իր առաջապներին, որ նրանք միասին հավաքվեն Իր անունով, Ինքը նրանց հենք կլինի: Նա նաև պատրիկաց նրանց միասին աշխագել, օգնել իրար և բարիք գործել ուրիշների համար: Վյու պատրիկաց նաև նրանք ամբողջ աշխարհին ցույց կրան, որ նրանք են Իր ճշմարիք հեքուրդները:

Ընդունիք հավաքվեք միասին և մի հաճելի և օգտակար բան արեք մեկ ուրիշի համար: Նարկավոր կլինի ունենալ մի բաղադրագում՝ ընդունիքի նախասիրած ճաշը կամ խորդիկը պարբապելու համար: Դա կարող է լինել մի բան թիւելը, ճաշին մասրուցվող մի ուրեմնիք կամ և մի բան, որ հաճախ ճեղքի վրակ ունենում եք օրվա ընթացքում ընդունիքի անդամներով վայելելու համար: Ընդունիքը այնպիսի բան, որը հնարավոր լինի կիսել նրա հենք, ով ձեր բան անմիջական անդամը չէ, և ընդունիքը այնպիսի մարդու, որի հենք կլարողանար այն կիսել:

Ընդունիքի ամեն անդամի մի գործք փվեք անել՝ ուրեմնիքի պարբասպության համար: Փոքր երեխաների համար դա կարող է լինել մի բան ամանի մեջ լցնելը: Ազելի մեծերը կարող են կշռել կամ խառնել բաղադրամասերը:

Երբ որ ձեր հարուկ ճաշաբեսակը պարբասպ լինի, միասին ասացեք հենքեյալ աղոթքը:

«Տե՛ր Դիտուս Քրիստոս, շնորհակալ ենք Քեզանից, որ մեզ ի մի հաւաքեցիր: Շնորհակալ ենք, որ բարիք սրելողելու կարողություն լիվեցիր մեզ, ինչպես այսօր կարստեցինք: Գիրենիք Քո կամքը, որ պարմիրում ես մեզ հոգ բանել իրար և գործել իրար համար: Օգնի՛ մեզ անելու այն, ինչ Քո կամքն է, և հիշելու, որ Դու միշտ մեզ հետ ես: Սա է մեր խնդրանքը Տոր, Որդու և Սուրբ Հոգու անունով. ամեն»:

Կազմակերպնք ձեր պարբասպածը ձեր կողմից ընդունիք անձի հետ կիսելը՝ կամ այն բանելու նրան, կամ հրավիրելու նրան ձեր գոտոն և միասին վայելելու ճաշաբեսակը:

# ԵԿԵՂԵՑԻՆ ՀՈՉԱԿՈՒՄ Է ՏԻՍՈՒՄԻ ԱՎԵՏԻՍԼ

ԴԱՍ 4

«Եվ պիտի լինի սրանից հետո, վերջին օրերին, - ասում է Աստված, - որ իմ Հոգուց պիտի թափեն ամեն մարդու վրա»: Ըստ Գործք. 2. 17ա



## ՀԱՅՏԱՍԱԳՈՐԾԵԾՔ

Նայի՛ նկարին և նկարագրի՛՛, թե ի՞նչ է կապարմում է:

Իրոք, երբեմն ուրիշների օգնության կարիքն ենք զգում: Կարող ենք շաբ բան անել ուրիշների օգնությամբ, ինչն ի վիճակի չինք լինի անել միայնակ: Եվ կամ դրանք ավելի դժվար կլինեին կամ ավելի երկար ժամանակ կպահանջեր առանց այն օժանդակության, որ ակնկալում ենք մեր ընկերներից: .



Ահա մի դող 49-րդ Սաղմոսից.

«Մեր Աստված պիտի զա հայրնապես, և մեր Աստված պիտի չլոի»:

Այս բառերն ի՞նչ են հայրնում մեզ, ինչպիսի՞ն է Աստված: Մի քանի բառով նկարագրի՛ր քո մբածումները:

---

---

---

---

Աստվածաշնչի պատմությունը կարդալիս գտի՛ր մի քանի եղանակներ, որ Հիսուսը խոստացավ, թե Սուրբ Հոգին կօգնի իրեն ծառայելու իր հետևորդներին:

## Տիսուր պատմում Է Սուրբ Հոգու մասին

Հայր Դուկ. 4. 16-22, Գործը. 2. 14-41



օրը, Պետքոս առաքյալը նույնպես խոսեց մարդկանց ամբոխի առջև Սուրբ Հոգու մասին այս անգամ Երուսաղեմում: Պետքոսն ասաց. «Ասպիած խոսքացել է թափել իր Հոգին բոլոր փղամարդկանց ու կանանց վրա: Դուք որպես Ասպծո ժողովուրդ պիտի դեսնեք ձեր որդիներին ու դուսպերին մարզարեանալիս Տիրոջ կամքի մասին: Ձեր երիտասարդները դեսինեք և ձեր ձերերը երազներ պիտի դեսնեն»:

Ասպիած ասում է. «Վերը, երկնքում գարմանալի գործեր պիտի ցույց փամ, իսկ երկրի վրա՝ նշաններ. արյուն և հոն և ծիփ մրրիկ: Արեգակը խավար պիտի դառնա, և լուսինը՝ կարմիր, ինչպես արյուն, քանի դեռ չի եկել Տիրոջ մեծ ու երևելի օրը: Եվ պիտի լինի այնպես, որ ամեն ոք, որ Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի»:

Ապա Պետքոսը հիշեցրեց ժողովրդին, որ չնայած Տիսուր Քրիստոսն սպանվեց խաչի վրա, բայց և մահը չկարողացավ իշխել Նրան, և Նա հարություն առավ մեռելներից: Սա այնպիսի մեծ հրաշք էր, որ Դավիթի թագավորը Տիսուրի երկար դարեր առաջ գիտեր դրա կապարման մասին:

Մի օր Տիսուր զայիս է Նազարեթ, այնպես, որ մեծացել էր: Սովորության համաձայն նա շաբաթ օրը ժողովարան է մքնում և կանգնում մնացինում՝ Հին Կրակարանը կարդալու հավաքված ժողովրդին:


Նրան ևն փոխանցում Եսայի մարզարեի գիրքը: Բացում է գիրքը, զգնում Սուրբ Հոգու մասին պատմող հավաքածը և սկսում կարդալ. «Տիրոջ Հոգին իմ վրա է, դրա համար իսկ օճաց ինձ, ինձ ուղարկեց աղքաքներին քարոզելու ու կույրերին՝ դեսողություն, կուղերքածներին ազատ արձակելու, Տիրոջ ընդունելի դրախին հոչակելու»:

Երբ Տիսուր ավարտեց ընթերցումը, փակեց գիրքը, փվեց պաշտոնյային ու նսպեց: Եվ ժողովարանում զբնվողների բոլոր աչքերը նրա վրա էին սևեռված: Սկսեց ասել նրանց. «Այսօր այս գրվածքները կապարվեցին, երբ լսում էիր ձեր ականջներով»: Այս խոսքերն ասելիս Տիսուր ժողովրդին հայդնում է, որ Հոգին միշտ իր հետ է: Սուրբ Հոգին գործում է բժշկելու և միիթարելու ժողովրդին:

Մի քանի դրախ անց, Հոգեգալստյան

Պետքուը հորդորեց ժողովրդին, որ եթե դարձի զան չար զործերից և հետևեն Դիսու Քրիստոսի օրինակին, Սուրբ Հոգու պարզել կարանան:

Հոգեգալսպյան օրը Սուրբ Հոգու ներկայությամբ սկսվեց Եկեղեցին, որն այսօր շարունակում է իր առաքելությունը մեր պապերի, մեր ծնողների և մեր անդամությամբ: Ասրված խոսքացավ, որ Սուրբ Հոգին միշտ կլինի Իր Եկեղեցու հետ:



## Հեռուստահարցագրույց

Ենթադրենք, թե դու հեռուստալրազրող ես: Ի՞նչ հարցեր կփայիր նրան, ով հենց նոր էր դուրս եկել ժողովարանից Դիսուի հետ հանդիպումից հետո: Գրի՞ր հնարավոր երեք հարցեր: Նկատի՛ ունեցիր, որ դրանցից գոնե մեկը պետք է լինի Սուրբ Հոգու հետ կապված:



## Գտնենք Պատասխանները

Ասրվածաշունչը մեզ գրալիս է շաբ եղանակների օրինակներ, երբ Սուրբ Հոգին օգնում և առաջնորդում է մեզ: Կարդա՛ Ասրվածաշնչից քաղված յուրաքանչյուր հարվածը և գրի՞ր գրառը նկարագրությանը համապատասխանող նախադասության սկզբում:

- \_\_\_ 1. Սուրբ Հոգին մարդկանց գրալիս է արվեստ ու գեղեցկություն սպեղծելու կարողություն:
- \_\_\_ 2. Սուրբ Հոգին օգնում է մարդկանց նվաճել ռազմական հաղթանակներ:
- \_\_\_ 3. Սուրբ Հոգին հանգստացնում է մարդկանց:
- \_\_\_ 4. Սուրբ Հոգին ուրախություն է պարզենում մարդկանց:
- \_\_\_ 5. Սուրբ Հոգին մասնակից է աշխարհում ամեն բանի սպեղծմանը, որ մենք օգտագործում ենք և վայելում:

- Ա.** Եսայի 63. 14
- Բ.** Դատ. 3. 9-11
- Գ.** Ելք 31. 1-5
- Դ.** Սղմ. 104. 24-30
- Ե.** Գործք. 13. 52

## Սուրբ հոգիւ սեպ հետ է

Այս դասի Ասրվածաշնչային հարվածում Հիսուսն ասաց, որ Սուրբ Հոգին օծել է Իրեն քարոզելու, բժշկելու ժողովրդին և ազաքելու նրանց չարից: Սուրբ Հոգին անբաժան մասն էր Հիսուսի առաքելության: Ասրվածաշնչի այլ փեղերում ևս կարելի է զբնել, թե Սուրբ Հոգին ինչպես էր գործուն ժողովրդի կյանքում:

Հիսուսի նման մենք նույնպես օծվում ենք Սուրբ Դրոշմի խորհրդով: Մկրտության ժամանակ քահանան մյուռոնաջրով նախ լվանում է մեր մարմինը, ապա սրբալոյս մյուռոնով խաչանիշ օծում մեր ճակապր, աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, թիկունքը և ողքերը: Մեր մարմնի յուրաքանչյուր մասը դրոշմելիս քահանան կարծ աղոթք է ասում: Օրինակ՝ մեր ճակապրն օծելիս ասում է. «Հիսուս Քրիստոսի անունով այս անուշահով յուղը թող լինի կնիք երկնավոր, անապական պարզեների»: Մյուռոնը Սուրբ Հոգու շնորհների խորհրդանիշն է: Այլ խոսքով՝ մենք կնքում ենք Սուրբ Հոգով, որպեսզի այս աշխարհում ապրենք որպես Ասրծու զավակներ: Վերջում փեր հայրը մեր պարանոցին է կապում օրինված խաչը, և մեր ծնողները մեզ հազցնում են ճերմակ, մաքուր զգեսպներ՝ ի նշան Քրիստոսի հետ նոր կյանքի:

Ընթերցի՞ր **Բ Կորնթացիներին 1. 21-22** հարվածը և լրացրո՞ւ ներքնեի նախադասությունը՝ օգքագործելով գրված բառերը, և այն համեմարի՞ր Ասրվածաշնչի գոտիի հետ: Այն ի՞նչ է պարմում Սուրբ Հոգու կնիքի մասին:

Իրեւ մարդկային արարածներ՝ մենք ևս կարող ենք «կնքել» որոշ բաներ: Թերևս փեսած կլինեք թանաքով կնքված ծրար կամ փաստաթուղթ: Կնիքը նշանակում է, որ այն, ինչ գրված է թղթի վրա, շափ կարենոր է: Սուրբ Հոգու կնիքն ամենակարևոր դրոշմն է մեր կյանքում:



«Նա մեզ և մեզ և

առհավադշան մեր մեզ մեզ»:

**սրբերի Հոգու կնիք դրեց օծեց**



## Սուրբ Աթանաս Մեծ

Սուրբ Աթանասը ծնվել է 296թ., Եգիպտոսի Ակերանու քաղաքում: Փոքր հասակում նա շար էր սիրում «Եկեղեցի-Եկեղեցի» խաղալ: Մի անգամ մի եպիսկոպոս փեսնում է նրան խաղալիս և ասում. «Վյո փոքրիկ փդան Եկեղեցու մեծ առաջնորդ է դաւնալու»: Եպիսկոպոսը չխալվեց:

325 թվականին աշխարհի փարբեր կողմերից Նիկիա քաղաքում մեծ ժողովի էին հավաքվել Քրիստոնեական Եկեղեցու բոլոր եպիսկոպոսներն ու քահանաները: Աթանասը, այդ ժամանակ դեռ սարկավագ, մասնակցում է ժողովին՝ որպես իր եպիսկոպոսի օգնական:

Չնայած իր շար երիտասարդ փարիքին, Աթանասը մեծ ճանաչում է զբնում ժողովի ընթացքում, որովհետև պաշտպանում է քրիստոնեական ճշմարիք հավաքը: Նանրահայր մի քանի անձնությունում ասում էին, որ Հիսուսը ճիշդ նույնը չէ, ինչ Նրա Նայը: Նրանք նույնիսկ հորինել էին գրավիչ հանգերգեր, որոնք ժողովուրդը սիրում էր լսել ու կրգել: Վյո երգերում ասվում էր, որ Հիսուսը Ասպծո Սուրբ Որդին չէր:

Աթանասը, կարճահասակ և ոչ այնքան պնդակազմ մարդ լինելով, շար հմուր ճարպասան էր: Նա իր խոսքերով զերծ պահեց Ժողովը և Եկեղեցին նոր ու սիալ զաղափարներից:

Նա մեծ զին վճարեց հավաքը պաշտպանելու համար: Նրա թշնամիները ցանկանում էին սպանել նրան, որի պարգառով սփիպված էր թաքնվել: Նրանք երբեք քաղաքարեցին նրան գրավարդելուց և հետապնդելուց կյանքի բոլոր օրերում: Բայց ոչինչ կարողացավ կանգնեցնել Աթանասին: Նա շարունակեց պնդել և զրել, որ Հիսուս Քրիստոսը ճշմարդապես Ասպծո Որդին է: Նա հիշեցրեց ժողովորդին, որ միայն Ասպծո Միածին Որդին է ի զորու փրկել մեզ: Նա զգուշացրեց իր բարեկամ քրիստոնյաներին չինքնել սիալ վարդապետությունների, նույնիսկ եթե դրանց քարոզիչները խելացի են, և զաղափարները՝ համոզիչ:

Աթանասը պետք է դմվարին ու երեմն միայնակ ճանապարհ անցներ: Բայց նա ապավինում էր Ասպծուն և զիվեր, որ Սուրբ Շողին միշտ իր հետ է:

1. Ինչպես ես կարծում, որ Սուրբ Շողին նրա հետ էր: Ներքեւի փողերին զրի՞ր մրածումներդ.

---



---

2. Սուրբ Աթանասն ի՞նչ հորդոր կրար մեզ այսօր:

---




---

3. Նկարագրի՛ր այնպիսի մի պահ քո կյանքում, երբ Հիսուսն օգնել է քեզ Սուրբ Շողու միջոցով:

---



---



Դասարանով երգե՛ք կամ արդասանե՛ք Սուրբ Աթանասին և սուրբ հայրապետներին նվիրված Օրհնության գշ շարականի հետեւյալ տունը.

**Եղ Սուրբ Երրորդության ձշմարիկ հավատը ուղղափառ բոլոր եկեղեցիներում  
քարոզեցին՝ հավատը Տորո, Որդուն և Ամենասուրբ Տոգուն:**

Եղ - գիշ-ւա-տըս ճշշ - մա - րիտս սուրբ Եր-ր ո ր - դու-թեանն  
ընդ-հա - նուր քա - րո - զե - ցին յե - կե - դե - ցիս  
ուղ-դա - փա - ռաց հա - ւա - տալ ի Յայր եւ Որ - դի  
եւ յա - մե - նա - սուրբ Յո - գի :

## ՏԱՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՏ

Միասին հավաքվելով ձեռքի դակ ունեցե՛ք հետեւյալ պարագաներ՝ Ասպիկածաշունչ, մի սպիտաքուղթ, դանակ, ցանկացած գույնի գրիչ կամ մարդիկ և այնքան հում կարդոֆիլ, որ բավարարի յուրաքանչյուրիդ՝ կես հավի քանակով: Նաև ունեցեր թանաքաման և ներկ: Ներկ պարբռասկելու համար վերցրե՛ք մի մեծ թասի մեջ իրար խառնե՛ք մի քիչ լվացքի փոշի կամ հեղուկ օճառ և 1/4 բաժակ ջուր կամ 1/3 բաժակ օսլա: Հարե՛ք զանզան մինչև որ այն դառնա հացի խմորի նման: Վյուինեփև ավելացրե՛ք փորդի գոյն՝ ըստ ճաշակի:

Այս շաբաթվա դասը նվիրված էր Սուրբ Տոգուն: Գիտենք, որ Սուրբ Տոգին ներկա էր Եկեղեցում Տոգեգալսբյան օրը: Ասպծո խոսքման համաձայն, Տոգին առաջնորդում է Եկեղեցին և ուղեկից է մեզանից յուրաքանչյուրին այն ժամանակից ի վեր:

Նոր Կրակարանը բազմից նշում է Ասպծո խոսքման մասին, որով Սուրբ Տոգին պիտի լինի մեզ հետ: Մկրպության ժամանակ մենք օծվում ենք սուրբ մյուսոնով, և կնքվում Սուրբ Տոգու շնորհներով: Այսպիսով, որպես մկրպված քրիստոնյաներ և Եկեղեցու անդամներ, մենք մեջ կրում ենք Տոգին հավուկ կերպով:

Միասին կարդացե՛ք Եփեսացիներին 4.30 համարը: Իրար հետ գրուցնք հետեւյալ հարցերի շուրջ:

1. Ինչպի՞ս ենք զերծ պահում «Սուրբ Տոգուն վշպանալուց»: (Ազնիվ լինելով, Ասպծուն սիրելով, հավաքը պահելով և չծույանալով Եկեղեցի գնալու և աղոթելու մեջ):
2. Ո՞րն է մեզ գրված խոսքումը: (Այն, որ մենք «կնքված ենք» փրկության օրվա համար, երբ Ասպծած պիտի ընդունի մեզ Իր Արքայության մեջ, եթե ապրենք Իր կամքի համաձայն):

Յուրաքանչյուրդ պարբռասկելով մի «կնիք»՝ կարդոֆիլի կեսի երեսին դանակով փորազրելով նախընքրեկի ձեր: Ապա ընդունե՛ք մի կապակցություն և գրե՛ք սրբարթողի վրա: Կարելի է գրել մի քանի խոսքումներ ընդունիքի համար, օրինակ՝ լինել ազնիվ, բարի, հավաքարիմ Ասպծուն և այլն: Կարելի է նաև գրել. «Մենք կնքված ենք Սուրբ Տոգով»: Վյուինեփև, յուրաքանչյուրդ «կնքե՛ք» այդ կապակցությունները՝ կարդոֆիլի կնիքները թանաքի կամ ներկի մեջ թաթահնեկով և թղթի վրա կնիք դնելով:

Թուղթը փակցրե՛ք մի տեղ, որը ընդունիքին կիշիցնի ձեր «կնքված» խոսքումների մասին: Աշխարհանքն ավարտե՛ք Սուրբ Տոգուն ուղղափառ հետեւյալ աղոթքով.

«Տոգի Ասպծո, Ասպծած ձշմարիկ, որ իշար Տորդանան գեր և վերնալուն, և լուսավորեցիր ինձ սուրբ Ավագանի մկրպությանը, մեղանչեցի երկնքի և Զու առաջ, մարդի ինձ վերսպին աստվածային Զու հրով, ինչպես առաջաներին՝ հրեղեն լեզուներով. և ողորմի՛ր Զու արարածներին և ինձ՝ բազմանեղիս. ամեն»:

## ԿՈՉՎԱԾ ԵՆՔ ՎԿԱՅԵԼՈՒ



**Ս**ոաբյալները վկայեցին Հիսուս Քրիստոսին որպես

Փրկչ՝ ամենուր քարոզելով Նրա մասին Բարի Լուրը:

Նրանք նաև բարի գործերով փաստեցին առ Հիսուս իրենց հավաքը՝ բժշկություններ  
կապարելով և միմյանց կարիքները հոգալով:

Սպեսիանոսը՝ առաջին սարկավագը, դարձավ առաջին մարդիրոսը՝  
իր կյանքը դալով հանուն Հիսուս Քրիստոսի:



### Առղճերի համար

Մենք վկայում ենք առ Դիսուս Քրիստոս մեր հավաքը  
մի շաբթ եղանակներով՝ ցոյց փառով, թե ինչպիսի՞ն էր Քրիստոսի  
նախնական Եկեղեցին: Առաջաները վկայեցին Բարի Լուրը քարոզելու միջոցով,  
որը նրանք փոխանցեցին շափ երկրներ: Նրանք նաև վկայեցին իրենց հավաքը  
բժշկություններ կադրարելու և միմյանց կարիքները հոգալու միջոցով: Սպեսառնոր  
դարձավ առաջին մարդիրոս վկան՝ Դիսուսի օրինակով զոհելով իր կյանքը:  
Առաջալները շարունակեցին իրենց վկայությունը՝ առաջնորդելով  
երիտասարդ Եկեղեցին:

«Եվ ամեն օր, տաճարում թե տներում, չին դադարում ուսուցանել  
և ավետարանել Հիսուս Քրիստոսին»:


Ըստ. Գործք. 5. 42



## ՀԱՅՏԾԱԳՈՐԾԵԾ Ք

### Դրանուշի լավ գաղափարը

Ահա մի խոսակցություն ընկերների միջն, երբ նրանցից մեկը նոր գաղափար է հայրնում: Արդյո՞ք նրանցից յուրաքանչյուրը մինույն կերպով է արձագանքում Դրանուշի գաղափարին:



**Մարի.** - Դիմա ասեք, բոլորդ գալի՞ս եք զնանք Հովնանենց գուն երեկոյան: Նրա համար դա շապ մնձ անակնկալ կլինի:

**Վարդուհի.** - Մեզ համար նոյնպես ուրախություն կլինի: Դիմա, երբ արդեն նա իրեն լավ է զգում, շապ կուրախանա մնզ գլւանելիս: Վստահ եմ, որ նա կակա շապ ծիծառելի պատմե, ինչպես միշվ:

**Քարսեղ.** - Ո՞ր ժամին պիտի հավաքվենք նորից, և ես ի՞նչ պիտի բերեմ:

**Հովսեփ.** - Թե մոռացե՞լ ես, հիշեցնեմ: Դու կրերս թղթախաղի քարքերը, Մարիան ու Վարդուհին խմորեղեն կթինեն, իսկ ես կրերեմ կիթառս: Սյուզին կրերի իր փիսիկին, որպեսզի Հովնանը մի քիչ խաղա նրա հետք:

**Մարի.** - Հովնանի մայրիկն էլ թեյ կպադրաափի մնզ համար: Նա ևս շապ ուրախ կլինի մեր այցի համար: Նա ասաց, որ դժվար կլինի այդ ամենը գաղփնի պահել Հովնանցից:

**Վարդուհի.** - Այո՛, ասաց նա և զրկելով համրութեց Դրանուշին հազար անգամ, երբ իմացավ նրա գաղափարը Հովնանին անակնկալ մարդուցելու մասին:

**Քարսեղ.** - Դա ծիծառելի է. Դրանուշը լրիվ կարմրեց և անհարմար զգաց:

**Սյուզի.** - Լավ, ես կարծում եմ, որ դա ամրողությամբ հիմար գաղափար է: Ես դեռ վստահ չեմ, որ այսօր կկարողանամ զալ: Եվ գուցե իմ փիսիկը ևս չցանկանա

երեկոյան դուրս գալ փնից այս ցուրպ եղանակին:

**Հովսեփ.** - Ի՞նչ նկարի ունես: Բոլորս էլ համաձայն ենք, որ Դրանուշի գաղափարն իրոք լավն է և այն շապ դոր կզա Հովնանին:

**Քարսեղ.** - Ճիշփ այդպես: Եվ նա լավ է ծրագրել այդ ամենը: Վյսպիսով, ո՞րն է խնդիրը, Սյուզիկի:

**Մարի.** - Ես կարծում եմ, որ դու նախանձում ես, բանի որ Դրանուշը գովասանք է սպանում դրա համար:

**Սյուզի.** - Անհեթենթ բան է: Ես էլ կարող էի այդպես մըրածել:

**Քարսեղ.** - Բայց դու չմըրածեցիր: Դա Դրանուշի գաղափարն էր: Նա ուզում էր օզնել իր ընկերոջը: Եվ դա հիանալի է:

**Հովսեփ.** - Ես էլ եմ միանում: Ուրեմն կհանդիպենք երեկոյան:

**Քարսեղ.** - Ինձ կզանզե՞ս ու կիշեցնե՞ս, Հովսեփ:

**Հովսեփ.** - Ի՞նչ է, հիշողություն չունե՞ս:

